ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/4-2

ք. Երևան « 12 » մարտի 2021 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Կարհագառ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Համլետ Կարապետյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի** կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և N 1.1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

2-րդ չափաբաժնի համար 3 653 000 (երեք միլիոն վեց հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

3-րդ չափաբաժնի համար 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

2-րդ չափաբաժնի համար 8 119 200 (ութ միլիոն մեկ հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

3-րդ չափաբաժնի համար 8 537 600 (ութ միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները փոխանցվում են՝ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Կարհագառ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1	ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011023984	ՀՀ 24801000076100000
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 01001431
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«12» մարտի 2021 թ. կնքված
N ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/4-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
2	50111130-28	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 Տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	600 000	1	ք. Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
3	50111130-29	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 Տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	600 000	1	ք. Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011023984
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Կարհագառ» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 24801000076100000
ՀՎՀՀ 01001431

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1. 1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
N ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/4-2 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-Գնացուցակ*

ՀՀ դրամ

Հ/Հ	SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	(Չափաբաժին 2)	(Չափաբաժին 3)
		HYUNDAI ELANTRA 1.8-2011թ. KMHDH41EBCU165769 HYUNDAI ELANTRA 1.8-2011թ. KMHDH41EBCU268838 HYUNDAI ELANTRA 2.0 I-2009թ. KMHDU41BBAU854443 KIA CERATO 1.6-2012թ. KNAFT411AC5962072	TOYOTA COROLLA 1.6 GAS-2012թ. JTNBV58E20J202447 TOYOTA COROLLA 1.4 -2011թ. JTNBH58E80J008495 TOYOTA COROLLA 1.6-2014 թ. NMTBB4JE10R050793 TOYOTA COROLLA 1.3 -2011թ. JTNBH58E90J008487
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		
1	Բռնկման համակարգի ստուգում	449	351
2	Սառեցման համակարգի ստուգում	449	351
3	Յուղման համակարգի ստուգում	449	351
4	Արտացման համակարգի ստուգում	449	351
5	Կցորդման համակարգի ստուգում	449	351
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	449	351

7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	449	351
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	449	351
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	449	351
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	449	351
11	ABS համակարգի ստուգում	449	351
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	449	351
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	449	351
14	Թափքի վիճակի ստուգում	449	351
15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	449	351
	ՏՍ-2 ներառվող ծառայությունների անվանումը		
16	Շարժիչի հանում տեղադրում	26929	21083
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5161	4568
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	4488	3514
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	11220	8785
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	8976	7028
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	13464	10542
23	Փականի խցուկի փոխարինում	2244	1757
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	17953	14055
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	2693	2108

26	Հրիչի փոխարինում	1571	1230
27	Ատամնավոր փոկի փոխարինում	16157	12650
28	Փոկանիվի փոխարինում	4488	3514
29	Ձգող հոլովակի փոխարինում	6732	5271
30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5386	4217
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	20197	15812
32	Մխոցային օղակների փոխարինում	20197	15812
33	Թափանիվի հանում և տեղադրում	13464	10542
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
34	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	449	351
35	Յուղի պոմպի փոխարինում	11220	8785
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	14362	11244
37	Բռնկման կարգավորում	2244	1757
38	CO կարգավորում	2244	1757
39	Օդի զտիչի փոխարինում	449	351
40	Սրահի զտիչի փոխարինում	898	703
41	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	3142	2460
42	Ինժեկտորի ֆորսունկայի մաքրում	3142	2460

43	Վառելիքիմղիչի փոխարինում	5835	4568
44	Վառելիքի զտիչի փոխարինում	4488	4217
45	վառելիքի բաքի հանում և տեղադրում	4488	3514
	3. Սառեցման և արտածման համակարգ		
46	Հովհարի փոկի հանում և տեղադրում	2244	1757
47	Հովհարի հանում և տեղադրում	6283	4217
48	Ռադիատորի հանում և տեղադրում	4488	3514
49	Ռադիատորի վերանորոգում	14811	12299
50	Թերմոստատի փոխարինում	4937	3514
51	Ջրի պոմպի փոխարինում	3591	2811
52	Ընդարձակող բաքի փոխարինում	3591	2811
53	Խլարարի հանում և տեղադրում	4488	3514
54	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1795	1406
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
55	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	6732	5271
56	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	8079	6325
57	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	8976	7028
58	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	4488	3514
59	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	449	351
60	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	13464	11244

61	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	11220	7028
62	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	13464	10542
63	ԱՓՏ-ի վերանորոգում	112204	87847
64	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	8079	6325
	5. Առջևի և հետևի կամրջակներ		
65	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	13464	10542
66	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	15709	12299
67	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	6732	5271
68	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	6732	5271
69	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	6732	5271
	6. Կախոց		
70	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	15709	12299
71	Տրավերսի հանում և տեղադրում	8976	7028
72	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	4488	3514
73	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4488	3514
74	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2244	1757
75	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	2244	1757
76	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	2244	1757
77	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2244	1757
78	Ձսպանակի հանում և տեղադրում	2244	1757

79	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2693	2108
80	Ներքևի լծակի հանում և տեղադրում	2244	1757
81	Ներքևի լծակի վռանների փոխարինում	2244	1757
82	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	2693	2108
83	Միջին ձգանի հանում և տեղադրում	2917	2284
84	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	4488	3514
85	Վերևի լծակի հանում և տեղադրում	2693	2108
86	Վերևի լծակի վռանների փոխարինում	3591	2811
87	Գնդե հոդակապերի փոխարինում	3142	2460
88	Ծայրակալների հանում և տեղադրում	3591	2811
89	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2693	2108
90	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2244	1757
91	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	898	703
92	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	673	527
93	Հետևի զսպանակի փոխարինում	2693	2108
94	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2693	2108
95	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	1571	1230
96	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	3591	2811

97	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3142	2460
98	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3591	2811
99	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	3591	2811
100	Անվաբացքի կարգավորում	1346	1054
101	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2244	1757
	7.Ղեկային մեխանիզմ		
104	Ղեկային կալունի հանում և տեղադրում	6732	5271
105	Ղեկային կալունի վերանորոգում	13464	10542
106	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	4488	3514
107	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	4488	3514
108	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	6732	5271
109	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	2244	1757
110	Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում	3591	2811
111	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	4488	3514
112	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	11220	8785
	8. Արգելակային համակարգ		
113	Գլխ.գլանի հանում և տեղադրում	7181	5622
114	Գլխ. գլանի վերանորոգում	7181	5622
115	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	6732	5271
116	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3142	2460

117	Բանվ. գլանի վերանորոգում	5835	4568
118	Արգելակային համակարգի օդահանում	1346	1054
119	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3591	2811
120	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3591	2811
121	Առջևի սուպպորտի վերանորոգում	3591	2811
122	Հետևի սուպպորտի վերանորոգում	3591	2811
123	Արգելակային փողրակի փոխարինում	1795	1406
124	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2244	1757
125	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2244	1757
126	Հետևի կոճղակների փոխարինում	2244	1757
127	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2468	1933
128	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	2468	1933
129	Արգելակային սկավառակի հղկում	4039	3162
130	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	4488	3514
131	ABS-ի հանում և տեղադրում	3591	2811
132	ABS-ի վերանորոգում	4488	3514
133	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	4488	3514
134	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	4488	3514
	9. Էլեկտրասարքավորում		
135	Էլեկտրասարքավորման վերանորոգում	4488	3514
136	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	3591	2811
137	Գեներատորի հանում և տեղադրում	4488	3514
138	Գեներատորի վերանորոգում	8079	6325
139	Մեկնարկիչի հանում և տեղադրում	4488	3514
140	Մեկնարկիչի վերանորոգում	5386	5271
141	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1346	1054
142	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1346	1054

143	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1795	1406
144	Վազքաչափի հանում և տեղադրում	3142	2460
145	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	2693	2108
146	Սարքերի պանելի հանում և տեղադրում	15709	12650
147	Արագաչափի հանում և տեղադրում	5386	4217
148	Ազդանշանի հանում և տեղադրում	2244	2811
149	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	4488	3514
150	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	5386	4568
151	Ազդանշանային համակարգի տեղադրում	6732	5271
152	Մագնիտոլային տեղադրում	4488	3514
153	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	4488	3514
154	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	4488	3514
155	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	13464	12299
156	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	6732	5271
157	Էլեկտրական տվիչների փոխարինում	898	703
158	Էլեկտրական անջատիչների փոխարինում	449	351
159	Վառոցքի կոճի փոխարինում	898	703
160	Վառոցքի մոմի փոխարինում	898	703
161	Կոնդիցիոների լիցքավորում	8976	7028
162	Կոնդիցիոների վերանորոգում	6732	7028
	10. Այլ ծառայություններ		
163	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գինը 1 քառ.դմ-ի համար	449	351
164	Անիվի հանում և տեղադրում	449	351
165	Անվադողի վերանորոգում	449	351
166	Անիվի բալանսավորում	898	703
167	Անիվի վալց	1795	1406
168	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	1346	1054